ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Դավիթ Գյուրջինյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լեզվի կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռումինիա, Բուխարեստ, 2019 թ. հոկտեմբերի 22-ից 24-ը

4. Հրավիրող կողմը.

Ռումինիայի հայերի միություն

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Հոկտեմբերի 12-ը Ռումինիայում Հայոց լեզվի, այբուբենի և մշակույթի օր հայտարարելու մասին» օրենքի ընդունմանը նվիրված «Հայոց լեզվի, այբուբենի և մշակույթի օր» խորագրով հանդիսավոր միջոցառմանը և գիտական քննարկումներին Ռումինիայի ակադեմիայում:

6. Քննարկված թեմաները.

Հայոց լեզուն ու հայկական մշակույթը Ռումինիայի և ռումինահայ համայնքի պատմության ընթացքում, Հոկտեմբերի 12-ը Հայոց լեզվի, այբուբենի և մշակույթի օր սահմանելու դերն ու նշանակությունը Ռումինիայում և սփյուռքում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ռումինիայի ակադեմիայում կազմակերպված հանդիսավոր միջոցառմանը ելույթ եմ ունեցել «Հայոց լեզվի սեղմ տարեգրությունը և Հոկտեմբերի 12-ը» խորագրով զեկուցմամբ:

Առանձին հանդիպումներ եմ ունեցել Ռումինիայում ՀՀ դեսպան Սերգեյ Մինասյանի, Ռումինիայի խորհրդարանի պատգամավորներ Վարուժան Ոսկանյանի և Վարուժան Փամբուկչյանի հետ, քննարկել Ռումինիայում ընդունված օրենքի դերն ու նշանակությունը և նրա արձագանքները հայկական սփյուռքում:

Ռումինահայ համայնքում հայոց լեզվի պահպանման խնդրի շուրջ քննարկումներ եմ ունեցել Ռումինիայի հայոց թեմում՝ թեմի առաջնորդ Տաթև եպիսկոպոս Հակոբյանի հետ:

Բուխարեստի պետական համալսարանի հայերենի դասախոս Ա. Ղուկասյանի ուղեկցությամբ այցելել եմ վերոնշյալ համալսարան և հանդիպել Ռուսաց և սլավոնական բանասիրության ամբիոնի վարիչ Աքսինիա Կրասովսկիի և հայերեն սովորող ռումինացի ուսանողների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Բուխարեստի համալսարանում հայերեն սովորող ռումինացի ուսանողներին հայերեն էլեկտրոնային ուսումնական նյութերով աջակցելու շուրջ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկում եմ ԿԳՄՍՆ ծրագրերում Ռումինիայի հայերի միության, Ռումինիայում ՀՀ դեսպանության և Ռումինիայի հայոց թեմի աջակցությամբ դիտարկել Բուխարեստի պետական համալսարանում հայերենի ուսուցումը

խթանելու, կրթական ծրագրերում հայագիտական թեմաների ընդգրկումը մեծացնելու հնարավորությունները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

25 հոկտեմբերի 2019 թ.